

III Պլաստիկական ներկայացումն».

- 1) Կարտոնից շինել բաժակակալ
- 2) կարտոնից շինել 24 օր տրամագծով լամպակալ
- 3) կարտոնի կլոր արկղիկի համար շինել կափարիչ և վրան կպցնել շրջանաձև պատկեր.

4) Փայտից սղոցել (շրջանի հատուածով) անկեան էտաժեր.

5) Նըջանի քառորդ հատուած՝ ծիածանի գոյներով նկարուած.

6) Պատի զամբիւղ (հատուած շրջանի յատակով)

7) Թղթից հովհար ծալել.

8) Դործել (աղջիկների աշխատանք) լուացման, թէյի գարնիտուր (օճառակալի, տաղի, թէյնոցի համար ԱՆ):

Այսպէս կարելի է պատրաստել առանին կեանքի մէջ գործածուող անթիւ պարտգաներ:

Երջանի օրինակը բաւարար չափավ կարող է լուսաքանել, թէ ինչպէս պէտք է իրենց գուղահեռական ընթացքով սերտ կերպով շաղկապուեն ձևադիտութիւնը, գծագրութիւնը և ձեռարուեստը:

Ա. 0.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀՈՂԱՑԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այժմ մի հարց է ծագում. Բազրատունեաց ժամանակ ճորտատիրութիւն մեր մէջ գոյութիւն է ունեցել: Միթաք Գօշի Պատաստանադիրքը գիւղացիների մասին հետևեալն է առում. «Աղատ յԱրարէն եղե մարդկային ընութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղե հողոյ և ջրոյ: Եւ զայսպատշաճ կարծեմ գատաստան. — զի թողեալ զտէրունիսն ազատ է ուր և կամեսցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տէրանց եւ ըռնագատէ զգնացեալոն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն աղատ են որդեք ծնեալք այլուր և ոչ անդ¹: Ինչպէս այս, նոյնպէս և մի քանի ուրիշ տեղեկութիւնների վրայ հիմնուած կարելի է ասել, որ եթէ ճորտատիրութիւն, եւրսպակական մաքով, մեր մէջ գոյութիւն չի ունեցել, բայց գիւղացիութիւնը մի այնտեսակ դրութեան մէջ է եղել, որ ճորտականից հեռու չէ: Այդ երեսում է թէ հարկերի շատու-

¹) Միթաք Գօշի Պատաստանադիրք եր. 320.

թիւնից և թէ գիւղացիների կատարած մի շարք ծառայութիւններից: Գիւղացիների գրութիւնն այնքան վատացել, ծանր էր, որ նոյնիսկ ապստամբութեան վորձեր են արել: Մեր պատմագիրներից Յովհաննէս կաթուղիկոսը յիշատակում է այդ տեսակ մի դէմք, թէ ինչպէս գիւղացիները նեղուելով իրենց ժանր միճակից և օգտուելով երկրի խառնակ դրութիւնից (916 թ.), ապստամբուեցին իրենց տէրերի դէմ: Յովհաննէս (916 թ.) կաթուղիկոսն այդ հետեւեալ կերպով է նկարագրում: «Նուազութագրիկոսն այդ հետեւեալ կերպով է նկարագրում»: «Նուազութագրիկոսն այն զմեծամեծոն ձեռներէց լինել ջանային, և ծառայք ըստ Սողոմոնի հնարէին, զի տեարո տրեխաւորեալ ի գետնի գնացեն և ինքեանք ելցեն յերիզաքս ահիպարանցա և առաթուր հարսղո՝ խօսխացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ»:

Այս ամենից յետոյ, հետաքրքիր է պարզել մի կարևոր խնդիր ևս: — Հայաստանում հողատիրական ինչ տեսակ կարգեր էին տարածուած: Պ. Յ. Սողաթելեանը իր մի ռւումնասիրութեան մէջ՝ Ենթագրում է, որ Հայաստանում գոյութիւն ունէր համայնական հողատիրութիւն: Այս ենթագրութեան հիմք նա ընդունում է այն հանգամանքը, որ Մխիթար Գօշե Դատաստանագիրքը հողային օքէնքներ չի պարունակում իր մէջ և այդ նրանից է, որ իբր թէ հողատիրութիւնը համայնական էր և հողից օգտուելը, հողաբաժանումներն և այլն կարգադրութիւնները թողնուած էր համայնքներին: Այս ենթագրութիւնը բաւական վիճելի է: Մեր պատմագիրներից և նոյն այդ Մխիթար Գօշի Դատաստանագրքից յայտնի է, որ Հայաստանում գոյութիւն ունէր հողի մասնաւոր սեփականութիւն:

Այսպէս Խորենացին դիբք Ա. ԾԶ. գլխում յայտնում է, որ Արտաշէս թագաւորը հրամայել էր գիւղերի և տգարակների ուահմանները որոշել «Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զուահմանո գիւղից և տգարակաց որոշել» քանզի բաղմամարդացոյց զաշեարհ հայոց՝ եկամուտ բազում ածելով յազգոս, և ընակեցուցանելով ի լերինս և ի հովիտու և ի դաշտու նւ նշան սահմանաց հաստատեաց այսպէս հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և պնակաձև վիսոել զմէջսն, ծածկելով յերկրի: և

1) Յովհաննէս կաթուղիկոս. Պատմութիւն Հայոց. Մասկուա 1855 թ. եր. 444.

2) Համայնական հողատիրութիւնը Երեւանի նահանգում. Յ. Սաղամելիան. Մուրմ 1890 թ. № 5-ից սկսած:

չորեքկուսիոն ի վերայ յարուցանել անըարտակս, և ոակու ինչ
բարձրագոյն յեթիլէ»:

Եղիշէն իւր պատմութեան մէջ յիշատակում է, որ գեւ-
դացիների հողաբաժինները կոչւում էին կեանք, արար, կալուած:
«Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշ-
խանութիւն յարքունուստ, եթէ յազատաց իցեն, եթէ շխնա-
կանաց իցեն, եթէ յեկեղեցւոյ, զինչ կեանս և թողեալ իցէ,
եկեսցին և կալցին զիւրաքանչիւր զարարս:... «Որ եւ բազումք
իսկ եկին և ժողովեցան և կալան զիւրաքանչիւր կալուածու:»:

Միսիթար Գօշի Դատաստանագրքից² էլ տեղեկանում ենք,
որ Հայոց մէջ գոյութիւն ունէր հողի մասնաւոր սեփականու-
թիւն: Ահա ի՞նչ է ասում այդ մասին. «Թագաւորք իշխանի
տուեալ գաւառ, եթէ շինէ ըստ հրամանի նորա ըերդ կամ
աւան և կամ աւերակս ի սահմանս ի ժառանգութիւնս հա-
մարեսցի նմա. մի՛ լիցի փոխել առանց մեծի և իրաւացի յան-
ցանաց. եւ զինի մահու նոցա՝ որդուց նոցա լիցի հրամանաւ-
թագաւորի: Սոյնպէս ընդ ձեռամք իշխանաց ազատք լիցին և
ընդ ազատաց ձեռամք շինականք. յորժամ աւերս շինեսցեն և
հողս հատանիցին ի մայրեաց, ոտացուած լիցի անփափոխ և
որդուց նոցա յետ մահու. այլ փոփոխումն ի վերայ մեծի յան-
ցանաց և իրաւացի լիցի, և մի ի պատճառս զրպարտութեան
փոփոխիցին»:

Այս յիշատակութիւններից երեսում է, որ Հայաստանում
գոյութիւն ունէր մասնաւոր սեփականութիւն: Բայց գրա հետ
միասին գոյութիւն ունէր և համայնակոն հողատիրութիւն,
միայն ոչ պարբերական բաժանումներով, այլ նման գերմանա-
կան «Մարկդենոսսենշաֆտինն»: Թէ ինչ ընոյթ էին կրում այդ
երկու հողատիրական կարգերը և թէ գրանցից որն էր աւելի
տարածուած, խնդրի վրայ որոշ չափով լոյս է ոփոռմ հայ
նահապետական ընտանիքի կազմակերպութիւնը, որի հետ կա-
րեսը է ծանօթանալ:

Հայ նահապետական ընտանիքը հանգիստանում է նախ՝
որպէս կրօնական-արիւնակցական մի միութիւն, համայնակե-
ցութիւն: Մեզ այստեղ հետաքրքրում է նրա վերջին կողմը:

1) Եղիշէ. Պատմ. Վարդ. Թէոդոսիա. 1861 է Յեղան եր. 206.

2) Միսիթար Գօշի Դատաստանագրքը ա. ա. Օ. եր. 517. Տես եւ
Կ. Սամուէլիան—Միսիթար Գօշի Դատաստանագրքը եւ հայոց հին բա-
ղաբացիական իրաւունքը. «Հանդէս Ամսօրեայ» 1910 թ. Մարտ.

3) Այս մասին խօսք կըմինի աշխատութեանս «Համայնական հողա-
տիրութիւնն Անդրկովկասում» զիսում:

Նահապետական ընտանիքը կամ գերդաստանը հայոց մէջ շատ երկոր կեանք է ունեցել։ Անցեալ դաշի սկզբներին այդ տեսակ ընտանիքները սովորական էին։ Ներկայումս էլ դեռ Տաճկաստանում կարելի է պատահել դրանց։ Հայ նահապետական ընտանիքը արիւակիցների-ազգակիցների մի միութիւն է հիմնուած նահապետական սկզբունքների վրայ։ Այս համայնակեցութեան գլուխ է կանգնած ընտանիքի հայրը, որ կոչւում է նահապետ, պատի։ Նահապետի իրաւունքները բաւական լայն են։ Ընդունելով, որ ընտանիքի բարեկեցութիւնը նահապետի միուկ գլխաւոր հոգոն է, նրան արուած էր անոահման ազատութիւն, ընտանիքի բոլոր անդամները պէտք է նրան անպայման ենթարկուեն, հնագանգուեն։ «Նահապետի իշխանութիւնը գրեթէ ծայրայեղ է և տարածւում է եղբայրների, որդիների, թոռների, որանց կանանց և այն բոլոր նոյնիոկ ոչ արիւնակիցների (տնափեսան, ծառան—«նոքար») անձերի վրայ, որոնք ապրում են նրա գերդաստանական յարկի տակ։ Այդ իշխանութիւնը տարածւում է, ոչ միայն անձի, այլ ոտացուածքի վրայ։ Նա է որոշում իւրաքանչիւրի աշխատանքը. անօրինում բազզն ու կեանքը, ամուսնացնում որդիներին և թոռներին, պատժում և նոյնիոկ հեռացնում տանից այն անգամին, որը համարձակուում է ընդդէմ գնուլ իւր իշխանութեանը։ Որդիները. ու թոռները չեն համարձակուում նրա ներկայութեամբ ոչ միայն խօսել և իրենց կարծիքները յայտնել, այլ և նստել, մինչեւ որ չհրամայէ։ Նահապետը պատասխանատու է և գերդաստանի ամեն մի անհատի արարքների համար, նա պարտաւոր է իւր միջոցների համեմատ հոգալ իւրաքանչիւր անդամի կարիքները, հետեւել նրա վարք ու բարքն։ Նա միայն, իրեւ գերդաստանի հանաչուած ներկայացուցիչ, իրաւունք ունի մասնակցելու գիւղական և հասարակական ըոլոր գործեցում իւր գերդաստանի կողմից։ Նմանապէս հարսանիքներում, թաղումներում և այլ ընտանեկան հանգէսներում և տօնախմբութիւններում նա հանդէս է գալիս իւր գերդաստանի իրեւ միակ ներկայացուցիչը։ Գերդաստանի ներքին տնային կառավարութիւնը գանւում է նահապետի կնոջ՝ տատի, մօր ձեռքում։ Նա է հոկում հարսների ու աղջիկների վրայ, առանց որի թոյլտութեան վերջինները ոչինչ իրաւունք չունին անելու, մի բան վերցնելու, գործկատարելու. մանաւանդ որ տան բոլոր բանալիները նրա մօտ են պահւում։ Տատը շատ անդամ միջնորդ է հանգիսանում հարսների և որանց ամուսինների, որդիների և որանց հայրերի

կամ նահապետի միջև ։ Տէպէտ նահապետը բացարձակ իրաւունքներ ունէր, բայց նա ոովօրապէս ընտանեկան գործերը միայնակ չէր վարում, այլ խորհրդի էր հրաւերում, մանաւանդ կարենը գէպէրում, ընտանիքի հասակաւոր անդամներին և համաձայն ընտանեկան խորհրդի էր վճիռներ տալիս, կարգադրութիւններ անում 2:

Նահապետական գէրգաստանի մէջ տիրում էր համայնական սեփականութիւն: Ընտանիքի շարժական և անշարժ բոլոր իրերը համայնական էին, ամենքին էին պատկանում: Միայն զարդարանքի իրերը, հագստեղէնը և կանոնց բաժինքը բացառութիւն էին կազմում: Ընտանիքի ամեն մի անդամը նրա համար էր աշխատում և բոլոր գործողութիւններով կապուած էր նրա հետ: Առանց ընտանիքին իմաց տալու, նրանից թոյլաւութիւն ստանալու, ոչ ոք իրաւունք չունէր մի բան գնելու, ձեռք բերելու կամ վաճառելու, ուրիշին տալու: Նոյնիսկ ընտանիքում բացակայ անդամները պարտաւոր էին, եթէ որ և է գործով զբաղւում էին, իրենց աշխատածը նահապետին տալայսպէս նրանք ամբոջովին թէ անձնապէս և թէ իրենց գործողութեամբ կապուած էին ընտանիքի հետ:

Նահապետական ընտանիքի մէջ տիրում էր աշխատանքը բաժանում: Ըտանիքի անհրաժեշտ իրերը, կարիքները հոգացում էին, ըստ կարելոյն, ընտանիքի մէջ, առանց գրոի օգնութեան դիմելու: Ընտանեկան այս կազմը շատ մեծ առաւելութիւններ ունէր այն ժամանակուայ դիւղատնեսութեան համար: Հայստանում հողը պահանջում է շատ խորը վարել, որի համար էլ պահանջւում էր յաճախ 10—12 զոյդ լիկան և բաւականաչափ աշխատող ձեռքեր: այնպէս որ առանց այդ աեսակ ընտանեկան կազմի հողի մշակութիւնը գժուար, անկարելի էր:

Հողը կազմում էր ամբողջ գէրդաստանի սեփականութիւն և ոչ անհատների: Մօտաւորապէս նոյն կարգերն էին տիրում: Հողի սեփականութեան վերաբերեալ, ինչ որ տիկին Պ. Եֆեմինկոն հիւսիսային Ռուսաստանում գտել և նկարադրել է 5: Նահապետական ընտանիքի քայլայման, բաժանման գէպօւմ, ոկզըում միայն շարժական իրերն էին բաժանում, իսկ հողը

1) Խ. Սամուէլիան. Հայ նահապետական ղերդաստանը. «Արարատ» 1908 թ. Փետրուար. եր. 176—177.

2) Սամուէլիան ա. ա. Օ. Մարտ եր. 266—267.

3) J. Keussler, Zur Geschichte und Kritik des bäuerlichen Gembindebesitzes in Russland. Հատոր Գ. եր. 44.

մնում էր անբաժան, որպէս ընդհանրութեան սեփականութիւն։ Համայնական հոգը կամ միացած ուժերով էին մշակում, կամ որոշ համաձայնութեան գալով, իրենց մէջ բաժանում էին և առանձին մշակում։ Բայց այդ բաժանումը մշտական չէր և հոգը գարձեալ կազմում էր ընդհանուրի սեփականութիւնը։ Կոր ժամանակներում հին սովորութիւնը վերացել է։ Վարելահողերի բաժանումը գոնէ գարձել է վերջնական, մինչդեռ խոտանատեղիները, մարդագետինները, արօտները մնացել են որպէս ընդհանուրի սեփականութիւն։

Ընտանեկան այս տեսակ բաժանումներից է ծագել հաւանօքին Անգրկովկասի շատ կողմելում տարածուած համայնական հողատիրութիւնը։ Այս մասին յետոյ խօսք կը լինի։

Հ. Սուսակելիան

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Պօտապենկօ «Ռուի ժամանակ».

Փոխագրութիւն Յակովը քահ. Սառիկեանի, Թիֆլիս, 1910, տպարան Օր. Ն. Աղանեանի, 93 Երես գինը՝ 25 կոպէկ։

Դրայիկի սիւժէն՝ նախանձն է, որին ընկերներից մէկը դէմ է դնում իր... մէ ծահոգութիւնը։ Գիմնազիացի VIII դասարանի վերջին հարցաքննութեանը, աշակերտներից մէկն իր կաշուից դուրս է գոլիս, որ ինքն ստանայ ոսկէ շքադրամը, և ոչ իր ընկերը, որ, սակայն, աւելի իրաւունք ունէր ստանալու։ Ու վերջինը զիջում է իր ընկերին։

Թէ ինչքան աջող է փոխագրել Սառիկեան քահանան, ոչինչ չեմ կարող ասել, քանի որ ձեռքիս տակ չունեմ ընտպերը, մանաւանդ, որ սովորաբար փոխագրողն աւելի է ազատութիւն տալիս իրան, քան թարգմանողը։

Մի քանի նկատումներ են մնար, եօ կթարգմանէի «Ռուկէ մեղալ», որովհետեւ գա ամենքին հասկանալի է։ Իսկ հանդիպած առաջին տեղում կփակագծէի՝ շքադրամ։

Ննչաւոր առարկաների մասին խօսելիս չի կարելի ասել բոլորը, այլ՝ ամենքը (Եր. 17)։ Անտեղիօրէն խօսքը չպէտք է ոկսել իսկ բառով։—Իսկ ես դասից եմ փախել . . (25)։ Փայտուն պատասխանել, փայլուն ընդունակութիւն ունի, —հայերէն չեն (63, 11)։ Ասում ենք՝ շատ լաւ (հիանալի) է պատաս-